

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

22.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7
գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան
2019թ.

<<13>>դեկտեմբեր

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Մ.Ս.Բիշարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Բ.Թադևոսյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 04.04.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի կողմից 03.12.2019թ.-ին ներկայացրած թիվ 0312-1 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 22.11.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7>> գնման պայմանագրի՝ թիվ 11 և 12-րդ չափաբաժինների մասով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական
Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1
Գանձապետարան
h/h 900018001975
ՀՎՀՀ – 00405431


Տնօրեն՝ Մ.Ս.Բիշարյան



<<ՎԱՃԱՌՈՂ>>

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Արգումանյան 32-10
Բանկ՝ ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ
Հ/Հ 002182558001
ՀՎՀՀ 201210095

Տնօրեն՝ Բ.Թադևոսյան



(ստորագրությունը)

Կ.Տ